ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION
AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC
OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS"CJSC
GENERAL DIRECTOR

0084, Հայաստանի Հանրապետություն,
քաղաք Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060-38-00-01

0084, Z. Andranik st.1, Yerevan, Republic of Armenia
Tel: 060-38-00-01

МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ
И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР
0084, Республика Армения, город Ереван, ул.З. Андраника 1
Тел: 060-38-00-01, E-mail: hven@hven.am, www.hven.am

No._____

«————--» ————————2020թ.

«ԲԼԱՄՄՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԱՐՏԻՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

Համաձայն «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Գնորդ) և «ԲԼԱՄՄՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) միջև 2020 թվականի հուլիսի 7-ին կնքված թիվ «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-20/09-2» ծածկագրով տնտեսական և սանհիգիենիկ ապրանքների ձեռքբերման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր)՝ Վաճառողը պարտավոր էր Պայմանագրի թիվ 1 հավելվածի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված 299487 (երկու հարյուր իննսունինը հազար չորս հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամի տնտեսական և սանհիգիենիկ ապրանքները մինչև 2020 թվականի հուլիսի 27-ը մատակարարել Գնորդին: Վաճառողը 2020 թվականի սեպտեմբերի 15-ին մատակարարել է Պայմանագրով նախատեսված բոլոր ապրանքները՝ բացառությամբ 9-րդ չափաբաժնով սահմանված բանվորական ձեռնոցների: Գնորդը 2020 թվականի սեպտեմբերի 22-ի գրությամբ սահմանել է ողջամիտ ժամկետ և նախազգուշացրել Վաճառողին՝ Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման վերաբերյալ, այլապես Պայմանագրից բխող պատասխանատվությունների կիրառումը Վաճառողի նկատմամբ կլինի անխուսափելի:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերության պահանջը՝ Գնորդը միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը:

Միաժամանակ հայտնում եմ, որ Գնորդի կողմից կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-20/09» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 10-րդ կետի համաձայն՝ Վաճառողից կգանձվի Պայմանագրի կատարման և որակավորման ապահովումները՝ Պայմանագրի 9-րդ չափաբաժնի մասով, որոնց ընդհանուր գումարը միասին կազմում է 55770 (հիսունհինգ հազար յոթ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատ. Դավիթ Գասպարյան
Հեռ. (060) 38-00-40